Քննարկվել և հավանության է արժանացել
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի
«31» 08 2022 թ. № 2 նիստում

Հաստատվել է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կոլեգիալ կառավարման խորհրդի «31» 08 2022 թ.
N 2-22 նիստում, նախագահ՝ _____ Ս.Դավիդյան
/ստորագրություն/

ՀՀ ԿԳՄՍՆ «ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ–Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ուսանողների կարիքների վերհանումը <<Չարենցավանի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) առաջնահերթություններից մեկն է, որի նպատակը քոլեջի կրթական միջավայրի և կրթության որակի բարելավումն է:

Ուսանողների կարիքների վերհանումը քոլեջում իրականացվում է մի շարք մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են օրինակ՝ հարցումները, անհատական զրույցները ուսանողների հետ, աշխատանքը ուսանողական խորհրդի հետ, աշխատանքը ծնողական խորհրդի հետ, կուրսղեկի դասաժամերը:

Քոլեջում ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ աշխատանքներ են իրականացնում՝

- կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը,
- կրթության որակի պատասխանատուն,
- կուրսղեկները,
- կարիերայի ուղղորդման պատասխանատուն,
- ամբիոնների վարիչները,
- ուսանողական խորհուրդը:

Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի համագործակցությունը կուրսղեկների, ուսանողական և ծնողական խորհուրդների հետ թույլ է տալիս ծանոթանալ յուրաքանչյուր ուսանողի անհատական, բարոյահոգեբանական կերպարին, առանձնահատկություններին, ընդունակություններին, կարողություններին, նախասիրություններին, ֆինանասական դրությանը, հաստատել և ամրապնդել կապեր ուսանողների և ծնողների հետ, ինչի արդյունքում ինքըստինքյան բացահայտվում են ուսանողների կարիքները, քննարկվում են դրանց լուծման հնարավորությունները և խոչընդոտները:

Քոլեջի կրթության որակի պատասխանատուն յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ացկացնում է հարցումներ, որոնք ուղղված են ուսանողների՝ քոլեջի մասին տեղեկացվածության, ստացած կրթությունից բավարարվածության և առկա կրթական կարիքների ուսումնասիրմանը և գնահատմանը, դիտարկումների ու առաջարկությունների բացահայտմանը: Հարցումներն իրականացվում են հետևյալ ուղղություններով՝

- քոլեջում առկա մասնագիտությունների, ուսուցման պայմանների վերաբերյալ հանրության իրազեկման գործիքների արդյունավետությունը, դիմորդների հետաքրքրվածության պատճառները (անցկացվում է առաջին կուրսերում),
- բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից,
- ուսանողների բավարարվածությունը քոլեջի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից,
- ուսանողների գոհունակությունը քոլեջային միջավայրից,
- ուսանողների բավարարվածությունը քոլեջի կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունից,
- ուսանողների կարծիքները, դիտարկումները և առաջարկները ազատ շարադրման եղանակով:

Ուսանողների կարիքների վերհանումը *կուրսղեկների* կողմից իրականացվում է կուրսղեկի դասաժամերի կազմակերպման և անցկացման միջոցով, որի ընթացքում կուրսղեկը բացահայտում է ուսումնառության ընթացքում ուսանողների առջև ծառացած խնդիրներն ու դժվարությունները, իրականացնում է դաստիարակչական բազմաբնույթ հարցերի քննարկում, տրամադրում է խորհրդատվություններ: Կուրսղեկները հրավրում են նաև ծնողական ժողովներ, որոնց ընթացքում քննարկվում են նաև ուսումնառության գործընթացի վերաբերյալ ծնողների դիտարկումներն ու մտահոգությունները, ինչը նույնպես նպաստում է ուսանողների կարիքների վերհանմանը:

Քոլեջի կարիերայի ուղղորդման պատասխանատուն պարբերաբար անցկացնում է կարիերայի ուղղորդմանն ուղղված խորհրդատվություններ, քննարկումներ, անհատական զրույցներ, որոնց ընթացքում վեր են հանվում ուսանողների այնպիսի կարիքներ, ինչպիսիք են կարիերայի պլանավորման և ուսման շարունակման հետ կապված հարցրերը:

Ամբիոնները աջակցում են ուսանողին ուսումնառության ողջ ընթացքում և իրականացնում են մասնագիտության հետ կապված աշխատանքներ, բացահայտում և պարզաբանում են ուսումնական գործընթացի հետ կապված հարցերը, որոնում լուծումներ՝ դրանով իսկ նպաստելով ուսանողների կարիքների վերհանմանը:

Ուսանողական խորհուրդը իրավունք ունի արտահայտել իր կարծիքը քոլեջի գործունեության տարբեր կողմերի մասին (ինչպիսիք են օրինակ՝ դասավանդման

որակը, ուսումնառության միջավայրը, միջոցների ապահովվածությունը և հագեցվածությունը, կարիերայի զարգացումը, ուսման շարունակությունը և այլն), վերհանել ուսանողների իրավունքների հետ կապված հարցեր, ուշադրությունը սևեռել ուսանողի կամ ուսանողների այս կամ այն կարիքների վրա, որոնք ուսանողական խորհրդի նախագահը ներկայացնում է տնօրենությանը:

Ուսանողներն ընդգրկված են քոլեջի Կառավարման խորհրդում, ինչը հնարավորություն է տալիս մասնակցել քոլեջի առջև ծառացած խնդիրների ու հարցերի քննարկման գործընթացին, բարձրաձայնել ուսանողության շրջանում առկա կարիքների և խնդիրների մասին, նպաստել ուսանողակենտրոն որոշումների կայացմանը:

Մանկավարժական խորհրդի և ամբիոնների նիստերի ժամանակ քննարկվում են խնդրահարույց ուսանողների հարցերը (բացակայություններ, ցածր առաջադիմություն, ֆինանսական անապահովվածությունը, անկարգապահություն և այլն), պարզում դրանք առաջացնող պատճառները, ներկայացվում և քննարկվում են հեռացումների և վերականգնումների պատճառները, առաջարկվում են խնդիրների լուծման տարբերակներ: